«ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կինեմատոգրաֆիայի մասին» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-302-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 2-րդ մասի գործողությունը դադարեցնել։

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. 2-րդ կետի գործողությունը դադարեցնել.
2. 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) **դրամագլուխ՝** պետական բյուջեից և Օրենքով չարգելված այլ աղբյուրներից ձևավորվող կամ համալրվող դրամական միջոցների ֆոնդ, որի ծախսերը կատարվում են միայն սույն օրենքի հիման վրա։»

3. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) **կինոթատրոն՝** ֆիլմի ցուցադրման համար նախատեսված վայր, որը հագեցված է էկրանով և տեխնիկական միջոցներով»։

4. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) **կինոժառանգություն՝** ֆիլմ որևէ տեսակի կրիչի վրա, ինչպես նաև ֆիլմի ստեղծման համար անհրաժեշտ պարագաները (բեմադրական իր, կահույք, հագուստ, սարք, սարքավորում, առարկա, կառույց) և շարժական գույքը, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը ունի գույքային իրավունքներ, ինչպես նաև այնպիսի ֆիլմեր, որոնց հիմնանյութը փոխանցվել է Հայաստանի Հանրապետության պահպանությանը»։

5. 11-րդ կետում հանել «ազգային» բառը.
6. 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13) **կինոփառատոն՝** մշակութային միջոցառում, որը հանդիսանում է նպատակային ընտրված ֆիլմերի ցուցադրություն, տեղի է ունենում դրա կազմակերպիչների կողմից հաստատված կանոնակարգին համապատասխան և կարող է իր մեջ ներառել մեկ և ավելի անվանակարգերում ֆիլմերի մրցութային և ոչ մրցութային ծրագիր»:

7. 22-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«22) «**վարձութային վկայական՝** Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիլմի տարածման համար պարտադիր հանդիսացող ազգային մարմնի կողմից տրամադրվող թույլտվություն սահմանող փաստաթուղթ»:

8. 23.1 կետը «ապրանքների և ծառայությունների» բառերը փոխարինել «ապրանքների, ծառայությունների և աշխատանքների» բառերով
9. 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26) **ֆիլմ տարածող (դիստրիբյուտոր)՝** տնտեսավարող սուբյեկտ, որը իրավունք ունի ֆիլմ տարածելու, ինչպես նաև իրականացնում կամ կազմակերպում է դրա տարածումը.»:

10. 27-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«27) **ֆիլմ ցուցադրող՝** տնտեսավարող սուբյեկտ, որը իրավունք ունի ֆիլմ ցուցադրելու, ինչպես նաև իրականացնում կամ կազմակերպում է դրա ցուցադրումը.»:

11. 35-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«35) **ֆիլմի ցուցադրում՝** ֆիլմի հրապարակային ցուցադրում կինոթատրոնում, հեռարձակում հաղորդալարով (ներառյալ մալուխային կապը) կամ առանց հաղորդալարի (ներառյալ հեռուստատեսային կամ արբանյակային կապը) և այլ տեխնիկական միջոցներով.»:

12. Լրացնել 36-րդ կետ հետևյալ բովանդակությամբ?

«36) **պետական ֆինանսավորում՝** պետական բյուջեի միջոցների հաշվին կինեմատոգրաֆիայի ոլորտին տրամադրվող ֆինանսավորում:»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) հաստատում է պետական ֆինանսավորում տրամադրելու կարգը.»:

2. 2-րդ կետի գործողությունը դադարեցնել.

3. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) հաստատում է ներդրումների մասնակի վերադարձը տրամադրելու, տրամադրումը մերժելու և դադարեցնելու կարգը, ժամկետները, պայմաններն ու հիմքերը .»:

4. 3.1-րդ կետում «վերադարձի ենթակա դրամական ծախսերի չափը սահմանելու պայմաններն ու հաշվարկելու նորմատիվները» բառերը փոխարինել «այլ պայմանները» բառերով.

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ?

«1) հանդիսանում է կինեմատոգրաֆիայի ոլորտի հեղինակների գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպություն.»:

2. 4-րդ կետում «նպատակով» բառը փոխարինել «միջոցներով» բառով.

3. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) իրականացնում է կինոժառանգության վերականգնումը ու թվայնացումը.»:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ազգային մարմինը Հայաստանի Հանրապետության հիմնադրած մշակութային հիմնադրամ է, որն ունի Օրենքով սահմանված բացառիկ լիազորություններ և հանդիսանում է կինեմատոգրաֆիայի ոլորտի աջակցող մարմին:».

2. 2-րդ մասի գործողությունը դադարեցնել:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում «ղեկավարը՝ ի պաշտոնե» բառերից հետո լրացնել «կամ ներկայացուցիչը» բառերը:

Հոդված 7. Օրենքի 4-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՄԸ, ԿԻՆՈՌԵԵՍՏՐԸ ԵՎ ՖԻԼՄԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**»:

Հոդված 8. Օրենքի 13-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ազգային ֆիլմ է համարվում այն ֆիլմը, որը միաժամանակ բավարարում է հետևյալ բոլոր պայմաններին.

1) ֆիլմի ստեղծագործական խմբի կեսից ավելին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է.-

2) ֆիլմարտադրությանը մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտ կազմակերպություն.

3) ֆիլմի բնօրինակը հայերեն է, կամ Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնություններից որևէ մեկի լեզվով, բացառությամբ այն դեպքերի, երբ օտար լեզվի օգտագործումը ֆիլմում հանդիսանում է ստեղծագործական գաղափարի անբաժանելի մաս.

2. Ազգային ֆիլմեր են համարվում նաև այն ֆիլմերը, որոնց գույքային իրավունքները փոխանցվել են Հայաստանի Հանրապետությանը կամ ազգային մարմնին:

3. Ազգային ֆիլմի կարգավիճակ տրվում է Լիազոր մարմնի որոշմամբ՝ Կառավարության կողմից սահմանված կարգով։»

Հոդված 9. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1. Վերնագրից հանել «և ֆիլմի նկատմամբ գույքային իրավունքները»,
2. 1-ին մասից հանել «Ազգային» բառը.
3. 2-րդ մասում հանել «հանրային» բառը.
4. 3-րդ մասի գործողությունը դադարեցնել։

Հոդված 10. Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի գործողությունը դադարեցնել։

Հոդված 11. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ֆիլմարտադրողին ներդրումների մասնակի վերադարձի շրջանակներում կարող է վերադարձվել ներդրվող դրամական ծախսերի 10-40 տոկոսը, որի տրամադրման և տրամադրումը մերժելու կարգը, ժամկետները, պայմաններն ու հիմքերը սահմանվում են Կառավարության կողմից։».

2. 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Ներդրումների մասնակի վերադարձի ենթակա ծախսերում չեն հաշվարկվում ֆիլմարտադրողի կողմից իրականացված այն ծախսերը, որոնք կատարվել են դրամագլխից և պետական ֆինանսավորման արդյունքում ստացված դրամական միջոցներով։».

3. 4-րդ մասի գործողությունը դադարեցնել.

4. 6-րդ մասի գործողությունը դադարեցնել.

5. 7-րդ մասի գործողությունը դադարեցնել.

Հոդված 12. Օրենքի 21-րդ հոդվածի գործողությունը դադարեցնել։

Հոդված 13. Օրենքի 22-րդ հոդվածում՝

1. Վերնագրում «**Պետական բյուջեի հաշվին ֆինանսավորումը**» բառերը փոխարինել «**Պետական ֆինանսավորման առանձնահատկությունները**» բառերով.

2. 1-ին մասում «Պետական բյուջեի հաշվին կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորումն իրականացվում է» բառերը փոխարինել «Պետական ֆինանսավորումն իրականացվում է» բառերով.

3. 3-րդ մասի գործողությունը դադարեցնել.

4. 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4? Յուրաքանչյուր տարվա համար հատկացված պետական ֆինանսավորումը ամբողջությամբ չօգտագործելը հիմք չէ հաջորդ տարվա համար պետական ֆինանսավորման միջոցներ չնախատեսելու կամ պակաս

նախատեսելու համար։».

5. 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5? պետական ֆինանսավորման համար նախատեսված և տվյալ տարում չօգտագործված միջոցները փոխանցվում են դրամագլխին՝ մինչև ընթացիկ տարվա առաջին եռամսյակի ավարտը։».

6. 6-րդ մասի գործողությունը դադարեցնել։

Հոդված 14. Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասում «շահառուներին տրամադրվում են» բառերը փոխարինել «օգտագործվում են» բառերով, իսկ «ազգային» բառից հետո լրացնել «և այլ» շաղկապով և բառով։

Հոդված 15. Օրենքի 27-րդ հոդվածի գործողությունը դադարեցնել։

Հոդված 16. Օրենքի 28-րդ հոդվածում՝

1. 1-ին մասում «2030 թվականի հունվարի 1-ից» բառերը և թվերը փոխարինել «2026 թվականի հուլիսի 1-ից» բառերով և թվերով։

2. 5-րդ մասի գործողությունը դադարեցնել։